ծանեաց զնա Մելիք Սալահատտին ընդ Ռեմլէ քաղաքին, եւ զհոյակապ եկեղեցին Ս. Գէորգայ զօրավարին. և զմի մասն նորին կարգեաց 'ի մզկիթ այլազգեաց, և մնաց այն պէս կիսաւեր 'ի դարս և 'ի ժամանակս. և 'ի վերջին յաւուրս մեր Յոյնք զկնի բազմադիմի վիճմանց դատաստանաց ընդ Լատինս՝ հանեալ հրաման յՕսմանեան դրանէ տիրեցին աւերակ մասին եկեղեցւոյն այնորիկ, եւ նորոգեալ ուղղեցին անդ սեղան պատարագի (1870).

ԳԼՈՒԽ ԻԹ.

Սարգիս Պատրիարգ Երուսաղէմի։ Դեսպան Վրաց։ Խնդիր վանաց Ս. Յակոբայ։ Վիրք և Լատինք։ Տէր Սահակ և Տէր Յովսէփ յատեանս Եգիպտոսի. Հրովարտակ Սուլթանին։

ՄԻՆՉԵՒ ցայս վայր ըստ կարի մերում գրեցաք փոքր 'ի շատէ զարշաւանաց եւ պատերազմաց զանազան ցեղից և ազգաց, զորս մղեցին 'ի Պաղեստին և 'ի սահմանս նորա, եւ բազում անգամ արեամբ ներկեցին զքարինս եւ զհողս Երուսաղէմի։ Այս դաժանութիւնք և խժդժութիւնք առաւել եւս սաստկացան 'ի դարս Քրիստոնէութեան. աւարառութիւնք յափշտակութիւնք գերութիւնք եւ սպանութիւնք, և այլ սոյին նման տառապանք և հալածումն, զորս կրեցին քրիստոնեայք, աւերեցան և այլայլեցան Ս. տեղիքն, և կորուսին զառաջին պայծառութիւնս և զվայելչութիւնս իւրեանց. կործանեցան և եղծան 'ի բազմավիշտ վտանգս վանորայք եւ եկեղեցիք, եւ բազումք եւս փոխեցան 'ի մզկիթ և յայլ իրս։ Խոպանացաւ երկիրն եւ կորոյս զառաջին բարեբերութիւն իւր յերեսաց ասպատակութեանց, զոր պարտաւոր էր քրտանց մշակին։ Այլ դարձուսցուք զբանս մեր յազգային դէպս, որք միանգամ պատահեցան 'ի ժամանակս յայսոսիկ յԵրուսաղէմ 'ի կրօնաւորս և 'ի վանորայս Հայոց 'ի դաւաճանութենէ եւ 'ի նենգութենէ օտար ազգաց քրիստոնեայ անուանելոց, որք